


Աշխատանքի վիճակագրության տվյալների աղբյուրները Data Sources of Labour Statistics



<https://www.armstat.am/am/>

Տեղեկատվության աղբյուր <i>Data source</i>	Աշխատանքի վիճակագրության ոլորտ <i>Domain of labour statistics</i>
Վարչական ռեգիստրներ <i>Administrative registers</i>	
ԱՍՀՆ Զբաղվածության պետական գործակալություն <i>State Employment Agency of the MoLSA</i>	Պաշտոնապես գրանցված աշխատանք փնտրողներ <i>Officially registered job seekers</i>
Պետական եկամուտների կոմիտե <i>State Revenue Committee</i>	<ul style="list-style-type: none"> - Անվանական միջին աշխատավարձ <i>Average nominal wages/salaries</i> - Պաշտոնապես գրանցված աշխատողների թվաքանակ <i>Number of officially registered payroll employees</i> - 1 և ավելի վարձու աշխատող ունեցող կազմակերպություններ <i>Establishments with 1 and more paid employees</i>

<p style="text-align: center;">Տեղեկատվության աղբյուր <i>Data source</i></p>	<p style="text-align: center;">Աշխատանքի վիճակագրության ոլորտ <i>Domain of labour statistics</i></p>
<p>Կազմակերպություններից տրամադրվող վիճակագրական հաշվետվություններ <i>Reports submitted by establishments</i></p>	
<p>- 10 և ավելի վարձու աշխատող ունեցող կազմակերպություններ <i>Establishments with at least 10 paid employees</i></p>	<p>- Աշխատանքի գին <i>Labour cost</i></p>
<p>- 10 և ավելի վարձու աշխատող ունեցող պետական հատվածի կազմակերպություններ <i>Establishments with at least 10 paid employees in public sector</i></p> <p>- 50 և ավելի վարձու աշխատող ունեցող ոչ պետական հատվածի կազմակերպություններ <i>Establishments with at least 50 paid employees in non-public sector</i></p>	<p>- Թափուր աշխատատեղեր <i>Job vacancies</i></p> <p>- Նոր ստեղծված աշխատատեղեր <i>Newly created jobs</i></p> <p>- Կրճատված աշխատատեղեր <i>Job cuts</i></p>
<p>- 50 և ավելի վարձու աշխատող ունեցող կազմակերպություններ <i>Establishments with at least 50 paid employees</i></p>	<p>- Մասնագիտական ուսուցում <i>Vocational Training</i></p>
<p>- 50 և ավելի վարձու աշխատող ունեցող արդյունաբերական, շինարարական, փոխադրումների և կապի ոլորտի կազմակերպություններ <i>Establishments with at least 50 paid employees in the sectors of Industry, Construction, Information and communication, Transportation and Storage</i></p>	<p>- Աշխատանքի պայմաններ <i>Working conditions</i></p>
<p>Կազմակերպությունների հետազոտություն <i>Establishment-based sample survey</i></p>	
<p>- 50 և ավելի վարձու աշխատող ունեցող ոչ պետական հատվածի կազմակերպություններ <i>Establishments with at least 50 paid employees in non-public sector</i></p>	<p>- Թափուր աշխատատեղեր <i>Job vacancies</i></p>
<p>Տնային տնտեսությունների հետազոտություն <i>Household-based sample survey</i></p>	
<p>Աշխատուժի հետազոտություն՝ մասնավոր տնային տնտեսություններում <i>Labour Force Survey in private households</i> https://www.armstat.am/am/?nid=212</p>	<p>- Աշխատանքային ռեսուրսներ <i>Labour Resources / Working Age Population</i></p> <p>- Աշխատուժ <i>Labour force</i></p> <p>- Աշխատուժից դուրս բնակչություն <i>Population out of labour force</i></p> <p>- Աշխատանքային գործունեություն <i>Work activity</i></p> <p>- Զբաղվածություն <i>Employment</i></p> <p>- Գործազրկություն <i>Unemployment</i></p> <p>- Աշխատուժի թերօգտագործում <i>Labour underutilization</i></p>

ԱՇԽԱՏՈՒԺԻ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ METHODOLOGY OF THE LABOUR FORCE SURVEY

Աշխատուժի հետազոտության նպատակը

Աշխատուժի հետազոտությունը (ԱՀ) ընտրանքային որոշակի մեթոդով ընտրված տնային տնտեսությունների (SS) վիճակագրական ուսումնասիրություն է, որի շրջանակում տեղեկատվություն է հավաքվում մասնավոր SS-ներում բնակվող բնակչությունից՝ միջազգայնորեն կիրառվող մեթոդաբանությամբ և ընթացակարգով, որի հիմքն Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) ստանդարտներն են: Ըստ այդմ՝ հետազոտության արդյունքները երկրների միջև համեմատելի և համադրելի են:

Միջազգայնորեն ճանաչելի է նաև, որ աշխատուժի հետազոտությունն աշխատանքի շուկայի հիմնական վիճակագրության լավագույն աղբյուրն է:

Հետազոտության նպատակը բնակչության զբաղվածության և գործազրկության՝ հանրությանն առավել հայտնի ցուցանիշների վիճակագրական գնահատումից գատ, երկրի աշխատանքի շուկան բնութագրող առանցքային այլ ցուցանիշների ապահովումն է՝ երկրի աշխատանքային ռեսուրսների կամ աշխատունակ տարիքի բնակչություն, աշխատուժ, աշխատուժի թերօգտագործում, աշխատուժից դուրս բնակչություն, գործազրկության տևողություն, ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածություն՝ ըստ տարատեսակ բնութագրիչների՝ սեռատարիքային, կրթական և ընտանեկան կազմ և այլն:

Աշխատուժի հետազոտության արդյունքներն ապահովում են աշխատանքի շուկայի կարճաժամկետ վիճակագրական ցուցանիշներ, հիմնականում՝ տարեկան, մասամբ նաև եռամսյակային:

Հետազոտության արդյունքներով հաշվարկված ցուցանիշները միջինացված են տարեկան կտրվածքով և ներկայացված են ըստ նշանակության՝ բացարձակ (հազար մարդ, ժամ, ամիս) և հարաբերական արժեքներով (մակարդակ, օրինակ՝ զբաղվածության մակարդակ):

Հետազոտության շրջանակը

• **Ընտրանքային հիմնական միավորը մասնավոր SS-ն է**, այսինքն չեն հետազոտվել ծերանոցներում, կալանավայրերում և համանման այլ ինստիտուցիոնալ SS-ներում բնակվողները:

• **Հետազոտվող միավորը 15-75** (ներառյալ) տարեկան անձինք են, ովքեր.

ա) սովորաբար բնակվում են տվյալ SS-ում,

բ) SS-ից բացակայել են **մինչև 12 ամիս** ժամանակով (երկրի ներսում կամ երկրից դուրս):

Մինչև 2018թ. հետազոտության ենթակա էին SS բացակա այն անդամներն, ովքեր իրենց հիմնական բնակության վայրից բացակայում էին 3 ամսից պակաս ժամանակով:

գ) գտնվել են պարտադիր ժամկետային զինծառայության մեջ:

• **Դիտարկվող ժամանակաշրջանը** հետազոտվող տարվա բոլոր ամիսներն են:

• **Հետազոտվող ժամանակահատվածը** հետազոտությանը (հարցմանը) նախորդող վերջին կամ անցած օրացուցային **մեկ շաբաթն է՝** երկուշաբթիից կիրակի օրը (ներառյալ):

• **Աշխարհագրական ընդգրկվածությունը.** հետազոտությունն իրականացվում է ՀՀ բոլոր մարզերում՝ ընդգրկելով քաղաքային և գյուղական բնակավայրեր:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը

Հետազոտության հարցաթերթը, կիրառված հասկացությունները, ցուցանիշների համախումբը և հաշվարկման մեթոդաբանությունը, ընտրանքի մեթոդը հիմնականում համապատասխանում են Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կողմից առաջարկվող սահմանումների և դրույթներին՝ հնարավորինս հաշվի առնելով Հայաստանում դրանց կիրառման առանձնահատկությունները՝ միաժամանակ ապահովելով միջազգային համանման ցուցանիշների հետ համադրելիությունը:

Հետազոտությամբ ուսումնասիրվող երևույթների մասշտաբների հնարավորինս ընդգրկման նպատակով որպես **աշխատունակ տարիք սահմանվել է 15-75 (ներառյալ) տարիքային միջակայքը**: Հետազոտվող բնակչության ստորին տարիքային սահմանը որոշվել է՝ հաշվի առնելով ԱՄԿ մեթոդաբանական սկզբունքներն ու առաջարկությունները, իսկ առավելագույն սահմանը՝ տարեցների շրջանում զբաղված և գործազուրկ բնակչության առավել տարածված տարիքը՝ հիմնված նախորդ տարիների հետազոտությունների արդյունքների վրա:

Հետազոտության մեթոդաբանության համաձայն.

- աշխատաշուկայում իրենց մասնակցության բնույթից կախված, 15-75տ. բոլոր հարցվողները (ռեսպոնդենտները) դասակարգվել են միմյանց բացառող երեք խմբերի՝ **զբաղված** կամ **գործազուրկ** կամ **աշխատուժից դուրս բնակչություն**:

- տվյալները բնութագրում են հարցվողների տնտեսական ակտիվության **ընթացիկ** կարգավիճակը՝ հետազոտվող կարճ ժամանակահատվածի (**մեկ շաբաթվա**) կտրվածքով:

Աշխատուժի մեթոդաբանության վերանայում, 2018թ.

19-րդ ԱՎՄՀ ներդրման շրջանակում, համաձայն նոր ստանդարտի.

1. Վերանայվել է հետազոտվող բնակչության շրջանակը:

- Բնակչության վիճակագրության և այլ սոցիալական վիճակագրության ոլորտների հնարավորինս համապատասխանեցման, աշխատանքի շուկայի վիճակագրության օգտակարության բարձրացման նպատակով վերանայվել է հետազոտվող բնակչության շրջանակը, ըստ որի աշխատաշուկայի ցուցանիշները վերաբերում են երկրի **մշտական (ռեզիդենտ) բնակչությանը**, որի սահմանումը հասանելի է հետևյալ հղման ներքո՝ «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2019» https://www.armstat.am/file/article/demog_2019_2.pdf: Համապատասխանաբար, **անձինք, ովքեր համարվում են երկրի մշտական բնակիչ, անկախ նրանից՝ աշխատում են ՀՀ-ում, թե արտերկրում, սկզբունքորեն ներառվում են աշխատուժի վիճակագրության մեջ**:

Մինչև 2018թ. աշխատուժի վիճակագրության ցուցանիշները հաշվարկվում էին առկա բնակչության հիմքով:

- Զբաղվածության ցուցանիշները վերաբերում են ինչպես ՀՀ-ում գտնվող **ռեզիդենտ տնտեսական միավորներում**, այնպես էլ ՀՀ-ից դուրս՝ ոչ **ռեզիդենտ տնտեսական միավորներում զբաղված ՀՀ մշտական (ռեզիդենտ) բնակչությանը** (այսուհետ՝ ազգային զբաղվածության ցուցանիշ (national employment)):

- Մյուս կողմից՝ ազգային զբաղվածության ցուցանիշից այժմ հնարավոր է տարբերակել **ներքին զբաղվածության ցուցանիշը (domestic employment)**՝ ՀՀ-ում գտնվող **ռեզիդենտ տնտեսական միավորներում զբաղված մշտական (ռեզիդենտ) բնակչությանը**: Վերջինս անհրաժեշտ է

աշխատանքի և արտադրության վիճակագրությունների հնարավորինս համապատասխանեցման համատեքստում՝ Ազգային հաշիվների համակարգ 2008 դրույթներին համապատասխան:

Մինչև 2018թ. աշխատանքի շուկայի ցուցանիշները վերաբերում էին ՀՀ առկա բնակչությանը՝ զբաղված ՀՀ աշխարհագրական տարածքում գտնվող տնտեսական միավորներում:

2. Արդիականացվել և ըստ այդմ՝ վերանվանվել են որոշ ցուցանիշների անվանումները.

• «Աշխատուժ» եզրույթը համարժեք է նախկին «տնտեսապես ակտիվ բնակչություն» եզրույթին: Ըստ այդմ՝ «Աշխատուժի մասնակցության մակարդակ»-ը համարժեք է նախկին՝ «տնտեսական ակտիվության մակարդակ» եզրույթին:

• «Աշխատուժից դուրս բնակչություն» եզրույթը համարժեք է նախկին՝ «տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն» եզրույթին:

3. Արդիականացվել են գործառնական մի շարք սահմանումներ:

• Ընդլայնվել է «աշխատանքային գործունեություն» հասկացության շրջանակը՝ չափելի դարձնելով աշխատանքի բոլոր ձևերը՝ հստակ տարբերակված ըստ **վճարվող** (զբաղվածություն) և **չվճարվող աշխատանքների** (սեփական սպառման համար ապրանքների արտադրություն և ծառայությունների տրամադրում, չվարձատրվող աշխատանքային պրակտիկա, կամավոր աշխատանք): Առավել մանրամասն տե՛ս «Աշխատանքային գործունեություն» բաժնում:

• Սեփական սպառման համար ապրանքների արտադրությունը և ծառայությունների տրամադրումն աշխատանքային գործունեության ձևերից մեկն է և չի համարվում զբաղվածություն: Ըստ այդմ՝ նախկին սահմանման համեմատ, վերջինս բացառվել է զբաղվածությունից: Աշխատաշուկայում իրենց ակտիվության բնույթից կախված, վերջիններս դասակարգվել են միմյանց բացառող կատեգորիաներից որևէ մեկում՝ «գործազուրկ» կամ «աշխատուժից դուրս բնակչություն»:

4. Ընդլայնվել է աշխատանքի շուկայի մշտադիտարկման առանցքային վիճակագրական ցուցանիշների անհրաժեշտ նվազագույն շրջանակը:

5. Ընդլայնվել է «աշխատուժի թերօգտագործում» հասկացության շրջանակը: Առավել մանրամասն տե՛ս «Աշխատուժի թերօգտագործում» բաժնում:

Վերոնշյալից գատ, այստեղ և հետայսու՝ աշխատուժի հետազոտության շրջանակում աշխատանքի շուկայի վիճակագրական ցուցանիշները հիմնականում կներկայացվեն 15-74 տարեկան բնակչության կտրվածքով՝ ապահովելու համար տարիքային ստանդարտ 5-ական, 10-ական խմբերի համաչափ բաշխումը:

Ընտրանքի համառոտ մեթոդաբանությունը

• **Ընտրանքի մեթոդը.** SS ընտրության համար կատարվել է ըստ մարզերի ստրատիֆիկացված (շերտավորված) երկաստիճան ընտրանք՝ **սիստեմատիկ հավանական ընտրանքի** մեթոդով: Երևանը և մարզերը՝ բոլոր գյուղական և քաղաքային բնակավայրերով, ընտրանքային համակցության մեջ ներառվել են ՀՀ բոլոր SS-ների կազմում այդ ստրատայում առկա SS-ների համամասնությամբ:

• **Ընտրանքի շրջանակը.** SS-ների հասցեների բազան է՝ ձևավորված ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքներով:

• **Ընտրանքային միավորը.** Հիմք ընդունելով ՀՀ վարչատարածքային բաժանումը, առաջին քայլով ընտրվել են նախնական ընտրանքային միավորները՝ հաշվային տեղամասերը: Նշված համամասնությունների հաշվարկման համար ԱՀ համար օգտագործվել են 2011թ. ՀՀ մարդահամարի արդյունքները: Երկրորդ քայլով պատահական ընտրությամբ ընտրվել են ընտրանքային հիմնական միավորները՝ SS-ները:

• **Ընտրանքի չափը.** 2018թ. հետազոտվել է 7 788 SS, որը կազմում է գլխավոր համակցության՝ ՀՀ բոլոր մասնավոր SS-ների մոտ 1%-ը: Ընդ որում, ընտրված SS-երից 4 752-ը եղել են քաղաքային, իսկ 3 036-ը՝ գյուղական բնակավայրերում:

Միաժամանակ, նույն քայլերով կատարվել է նաև պահուստային ընտրանք՝ կանխատեսելով, որ զգալի թվով դեպքերում հարցաթերթ չի լրացվի՝ չգտնված կամ այլևս գոյություն չունեցող հասցեների, նախկին բնակելի կացարանն այլ նպատակով օգտագործելու, հետազոտությանը մասնակցելուց SS հրաժարվելու, երկրից բացակայելու (փակ դռների) կամ այլ պատճառներով: Արդյունքում՝ հետազոտությանը չմասնակցած SS-ները փոխարինվել են նույն մեթոդով կառուցված պահուստային ընտրանքից՝ 3 419 SS:

Ընտրված տնային տնտեսությունները տարվա ընթացքում հետազոտվում են միայն մեկ անգամ:

Հետազոտության պատասխանելիության, չպատասխանելիության և ընդգրկվածության մակարդակներ, 2018թ.

Ընդամենը հետազոտված SS	7 788
Հարցազրույցը կայացած SS	4 369
Փակ դուռ՝ S/S-ն հասանելի չէ ՀՀ-ում	1 440
Փակ դուռ՝ S/S-ն արտերկրում է	1 223
Հասցեն չի գտնվել / վերացել է	134
Հասցեն օգտագործվում է այլ նպատակով	27
S/S մերժում	456
Կացարանի մուտքը սահմանափակ է	80
Հայերեն հարցումը հնարավոր չէ	1
Չկայացում՝ այլ պատճառով	58
Չպատասխանելիության մակարդակ, %	7.6
Չընդգրկվածության մակարդակ, %	36.3

Հետազոտության ընտրանքային կշիռների հաշվարկման մեթոդաբանության վերանայում, 2018թ.

Հետազոտության ընտրանքային կշիռներն առաջին անգամ ճշգրտվել են ըստ ՀՀ մշտական բնակչության ընթացիկ հաշվառման ցուցանիշների (այսուհետ՝ ճշգրտված կամ կալիբրացված կշիռներ): Ըստ այդմ՝ 2018թ. հետազոտության արդյունքներով գնահատված բնակչության թվաքանակը նույնական է ՀՀ մշտական բնակչության ընթացիկ հաշվառման ցուցանիշի հետ, որի արդյունքում սույն ժողովածուում տեղ գտած 2018թ. աշխատանքի շուկայի ցուցանիշները տարբերվում են ոչ միայն ՀՀ ՎԿ նախորդ տարիների, այլ նաև 2018թ. այլ հրապարակումների նույնանուն ցուցանիշներից:

- Մինչև 2018թ.-ը հետազոտության ընտրանքային կշիռները հաշվարկվում էին 2011թ. մարդահամարի արդյունքներով ստացված բնակչության թվաքանակի հիմքով (այսուհետ՝ չճշգրտված կշիռներ):

Տվյալների որակը և ներկայացուցչականությունը

Ընտրանքի տարեկան չափն ամփոփ ցուցանիշների մասով (օրինակ, ընդամենը գործազրկություն, զբաղվածություն և այլն) ՀՀ կտրվածքով ապահովել է բարձր, իսկ մարզերի մակարդակով՝ բավարար ներկայացուցչականություն:

Որոշ դեպքերում տվյալներն ունեն ցածր կամ ոչ բավարար ներկայացուցչականություն կամ կիրառելիության որոշակի սահմանափակումներ, ինչը հարկ է նկատի ունենալ տվյալների վերլուծության ժամանակ: Այդպիսիք են, օրինակ.

- Ընտրանքի սահմանափակ չափի պատճառով համեմատաբար քիչ տարածում ունեցող երևույթներն օբյեկտիվորեն ունեն ընտրանքում ընդգրկվելու փոքր հավանականություն: Այդ իսկ պատճառով մանրամասնեցման (դեգագրեգացման) բարձր աստիճան ունեցող տվյալները (օրինակ՝ միաժամանակ մի քանի փոփոխականների խաչաձևումը) կարող են ունենալ սահմանափակ կամ ոչ բավարար ներկայացուցչականություն: Նմանապես՝ հետազոտության եռամսյակային տվյալները ընտրանքային փոքր համակցության պատճառով (տարեկան ընտրանքի մեկ քառորդը) ներկայացուցչական են միայն ցուցանիշների խոշոր խմբավորմամբ:

- **Ուշադրություն.** հարկ է նկատի ունենալ, որ 7.5 հազարից փոքր արժեք ունեցող գնահատականների (կշռված տվյալների) հարաբերական ստանդարտ սխալը 20%-ից բարձր է, այսինքն՝ ունեն արժանահավաստության որոշակի սահմանափակում (ընտրանքային նշանակալի շեղում), ինչը հարկ է նկատի ունենալ դրանք օգտագործելիս:

- Ընտրանքի կիրառվող մեթոդը լիարժեք հնարավորություն չի ընձեռում ապահովել տնտեսական գործունեության կամ զբաղմունքի բոլոր տեսակների համարժեք ընդգրկվածություն, քանի որ ընտրանքը ստրատիֆիկացված չէ ըստ վերոնշյալ փոփոխականների:

Բնակչության տնտեսական ակտիվության կարգավիճակը բնութագրող ցուցանիշները հիմնված են ստանդարտացված հարցաթերթի հարցերի **հարցվողների** (ռեսպոնդենտների) պատասխանների՝ անձնական (սուբյեկտիվ) գնահատականների վրա: Որոշ դեպքերում հարցերի պատասխանները ստացվել են ոչ թե անմիջապես հարցվողից, այլ անուղղակի ընտրված SS այլ չափահաս անդամից՝ հետազոտության պահին հարցվողի մասնակցության անհնարիխության պատճառով (օրինակ՝ բացակայության): Արդյունքում ստացված տեղեկություններն առանձին դեպքերում կարող են պարունակել պատասխանի մոտավորություն:

ԱՀ մեթոդաբանության և այլ առանցքային փոփոխություններն՝ ամփոփ

Փոփոխության առարկա	Նախկին (մինչև 2018թ.)	Նոր (սկսած 2018թ.)
Բնակչության ընդգրկվածություն	Առկա բնակչություն	Մշտական բնակչություն
<i>որից՝ 3-ից մինչև 12 ամիս ՀՀ բացակա մշտական բնակչություն</i>	Ենթակա չէին հետազոտման	Ենթակա են հետազոտման
Զբաղվածություն ընդգրկվածություն		
- Շրջանակ	Ներքին զբաղվածություն	Ազգային զբաղվածություն
- Սեփական սպառման համար ապրանքների / ծառայությունների արտադրություն	Հաշվվում էր որպես զբաղվածություն	Չի հաշվվում որպես զբաղվածություն
- Արտադրական միավորի ռեզիդենտություն (գտնվելու վայր)	Տվյալներ չէին հավաքվում / բացակայում էր մանրամասնեցում	Հավաքվում են տվյալներ / առկա է մանրամասնեցում
Հետազոտության ընտրանքային կշիռներ	Չճշգրտված (ըստ 2011թ. Մարդահամարի արդյունքների)	Ճշգրտված (ըստ մշտական բնակչության ընթացիկ հաշվառման / գնահատականի)
Բնակչության տարիքային ընդգրկվածություն	15-75տ. բնակչություն	15-75տ. բնակչության
Հրապարակվող ցուցանիշների ընդգրկվածություն	15-75տ. բնակչություն	15-74տ. բնակչության
Եզրույթներ	Տնտեսապես ակտիվ բնակչություն	Աշխատուժ
	Տնտեսական ակտիվության մակարդակ	Աշխատուժի մասնակցության մակարդակ
	Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	Աշխատուժից դուրս բնակչություն
Ցուցանիշներ		
- Սեփական սպառման համար ապրանքների արտադրություն	Տվյալներ հավաքվում էին՝ առանց մանրամասնեցման	
- Սեփական սպառման համար ծառայությունների տրամադրում	Տվյալներ չէին հավաքվում	Տվյալներ հավաքվում են՝ մանրամասնեցված և հրապարակվում՝ եռամսյակային պարբերականությամբ
- Չվարձատրվող աշխատանքային պրակտիկա	Տվյալներ չէին հավաքվում	
- Կամավոր աշխատանք	Տվյալներ չէին հավաքվում	
- Թերզբաղվածության ցուցանիշներ (ԹԱ1-ԹԱ4)	- ԹԱ1 շարքեր առկա են 2001թ. - ԹԱ1-ԹԱ4 տվյալներ հավաքվում էին, բայց ոչ հաշվարկվում	
- Աշխատաժամերով պայմանավորված թերզբաղվածություն	Հաշվարկվում էին տարեկան	Հաշվարկվում է և հրապարակվում ըստ եռամսյակների
- Երկարատև գործազրկություն	Հաշվարկվում էին տարեկան	Հաշվարկվում է և հրապարակվում ըստ եռամսյակների

THE METHODOLOGY OF THE LABOUR FORCE SURVEY

Labour Force Survey objective

Labour Force Survey (LFS) is a statistical observation of the households selected by the appropriate method. Through the survey, an information is collected from the population usually living in private households using standard methodology and procedures applied at the internationally level in accordance with the International Labour Organization (ILO) standards. Thus, the survey results are comparable across countries.

Internationally accepted that LFS is the best source of comprehensive statistical information on country's labour market.

The objective of the survey is, apart from statistical measurement of the publically well-known indicators of employment and unemployment, but also provision of other headline indicators characterizing the country's labour market: country's labour resources or working age population; labour force and labour underutilization; population out of labour force; unemployment duration, formal and informal employment by various characteristics such as age, sex, education, family statuses, etc.

The results of the survey are averaged on yearly basis and are presented in absolute terms (thousand people, hours, months) and relative values (e.g. employment rate).

Scope of survey

- **Primary sampling unit** is a private household. The residents of the retirement homes, prisons and other institutional households are not surveyed.

- **Surveyed units are** persons aged **15-75** (including), who:

- a) Usually live in a given household;

- b) Were absent from the household **up to 12 months** (in country or abroad);

Until 2018, only those household absent members who were absent from their place of usual residence for up to 3 months were the subject of survey.

- c) Were in compulsory military service.

- **Observation period** is all months of the surveyed year.

- **Reference period** is the last **one calendar week** preceding the survey, from Monday to Sunday (including).

- **Geographical coverage:** Survey conducted in all marzes (provinces) of the RA, covering both rural and urban settlements.

Methodological background of the survey

The design of the questionnaire, used concepts, set of indicators and calculation methodology, sampling method comply with the definitions and concepts recommended by the ILO and Eurostat, taking into account national context.

By the aim to cover a large scale of the phenomena studied by the survey, the **working age has been defined a 15-75 (including) age range**. In setting of lower age limit for target population, the ILO methodological principals and recommendations was taken into consideration and the upper age limit,

taken into account the prevalent age of employed and unemployed among elderly population. The latter based on the survey results of the previous years.

According to the survey methodology:

- All respondents of the age 15-75, depending on the nature of their participation in the labour market, classified into the three mutually exclusive and exhaustive groups: **employed** or **unemployed** or **persons not in the labour force**.
- **Data** describe the **current** economic status of respondents for the short reference period (**one week**).

Revision of Methodology, 2018

For the purposes of adequately reflect new developments in labour market, provide up-to-date labour force statistics and promote their international comparability, the methodology behind the Labour Force Survey has been revised since 2018. The basis of the revision are concepts of “Resolution concerning statistics of work, employment and labour underutilization” adopted by the 19th International Conference of Labour Statisticians (19th ICLS) in October 2013. For more details see https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/publication/wcms_220535.pdf.

The aforementioned revision of the methodology of labour statistics, which is a transnational process, objectively has led to a certain break in the time series of indicators that should be taken into account when comparing and analyzing data.

In the context of the introduction of the 19th ICLS according to the new standard:

1. The framework of reference population is updated.

- For the coherence of labour statistics with population and other social statistics and enhancing the usefulness of the labour statistics, the framework of reference population updated. As a result, the labour market indicators refer to the **country’s usually resident population** (the definition is **accessible** under the following URL https://www.armstat.am/file/article/demog_2019_2.pdf, The Demographic Handbook of Armenia, 2019). Accordingly, **persons considered to be usually residents of the country, whether employed in RA or abroad, are in principle included in the labor force statistics**.

Until 2018 for labour market indicators, the reference population were the de facto (present) population.

- **Indicators of employment refer to employed resident population both in resident producer units located in the RA, and in non-resident economic units outside of RA (hereafter-national employment).**

- On the other hand, now it is possible to distinguish national employment from the domestic employment, that is, **resident population employed in resident producer units located in RA**. The latter is needed to ensure coherence between work and production statistics, in accordance to concepts of the most recent version of System of National Accounts, SNA 2008.

Until 2018 indicators of labour force statistics were referred to de facto (present) population of RA employed in resident production units located in the RA.

2. Some of the terminology used are updated:

- The term of “labour force” is equivalent to the previous term “economically active population”. Accordingly, “labour force participation rate” is equivalent to the term “economic activity rate”.

- The term “population out of labour force” (Population not in the labour force) is equivalent to the previous term “an economically inactive population”.

3. Some operational definitions are updated:

- The scope of the concept of “work activity” has been expanded to make all forms of work measurable and clearly distinguishable between **paid** (employment) and **unpaid work** (own-use production of goods and services; unpaid trainee work; volunteer work). For more details see in the Section “Work Activity”.

- *An own-use production of goods and provision of services are one of the forms of work and do not considered as an employment. Consequently, compared to the previous definition, the latter excluded from the employment. Depending on the nature of their activity in the labour market, the latter classified in one of the mutually exclusive categories: "unemployed" or "population out of labour force".*

4. The minimum set of statistical headline indicators for monitoring labour market performance is broaden.

5. The concept of “labour underutilization” is **expanded**. For more details see in the Section “Labour Underutilization”.

In addition to the abovementioned, here and thereafter, within the labour force survey indicators of labour market statistics will be mainly presented for the population aged 15-74 to ensure a standard sets of 5-group, 10-group age distribution.

Brief sampling methodology of the survey

- **Sampling method:** a two-stage stratified sampling design has been performed to conduct the survey. The method of **systematic probability sampling** is used to frame the sample. Yerevan and all marzes (provinces) with rural and urban settlements are covered by sample population with proportion of all HH available in these strata.

- **Sampling frame:** HHs address database from the 2011 Population Census of RA.

- **Sampling unit:** The sampling algorithm was built on the basis of the administrative-territorial divisions of RA into 10 marzes (provinces) and capital city of Yerevan. At the 1st stage of sampling the preliminary sampling units (PSUs) were selected, which are enumeration areas (EAs). 2011 RA Population Census results were used to calculate the mentioned proportions for 2018 LFS. At the 2nd stage of sampling, HHs, which are the primary sampling units, were selected randomly.

- **Sampling size:** annually totalled 7 788 HHs or around 1% of the total population (all private HHs in RA). From the sampled HHs 4 752 HHs were in urban and 3 036 in rural areas.

At the same time, using the same steps of sampling has been performed a reserve sample (sampling with replacement) because of outdated sampling frame (HHs address database from the 2011 Census). It anticipated that in most cases the questionnaire might not filled out because addresses might not be found or no longer exist or former housing used for another purpose or because of households refused to participate in survey or absence of households (closed doors) or other reasons. As a result, the HHs not been interviewed, were replaced from the reserve sample – 3 149 HHs.

Sampled households interviewed only once a year.

Survey Response, Non-Response and Coverage Rates, 2018

Total of surveyed households	7 788
Interview took place fully	4 369
Closed door (empty dwelling): HH in RA	1 440
Closed door (empty dwelling): HH abroad	1 223
Address not found	134
Address used for another purpose	27
Refused HH	456
Entrance of dwelling is limited (buildings with intercoms)	80
Interview is not possible in Armenian	1
Non-response: other reasons	58
Total non-response rate, %	7.6
Total non-coverage rate, %	36.3

Revision of Methodology on Calculation of Sampling Weights, 2018

Survey sampling weights for the first time adjusted according to the **current projection (estiamtes) of RA resident population** (hereinafter, **adjusted or calibrated weights**). Accordingly, 2018 population estimates based on the survey results are identical to the current **projection (estiamtes) of RA resident population**. As a result, the labour market indicators presented in this handbook are differ from the same indicators of previous years, but also from those 2018 indicators posted in other publications.

- *Until 2018, the survey sampling weights had been calculated based on the 2011 RA population census results (hereinafter, **unadjusted weights**).*

Data quality and representativeness

The **annual** size of the sample in terms of aggregated indicators (e.g. unemployment, employment, etc.) provides high representativeness on country level, and provides minimum representativeness on marz (province) level.

In some cases the data have low validity or insufficient representativeness, hence, some limits for use, which should be taken into account while analyzing the data. These can be:

- Relatively less popular phenomena objectively have less chance to be included in the sample because of its limited size. Therefore data at a high level of disaggregation (e.g. the simultaneous crossing of several variables) may have limited or insufficient representativeness. Similarly, the quarterly survey data (annual sample per quarter) are representataive only by large grouping of indicators because of the small sample size.

- **Important!** Estimates (weighted data) less than 7,5 thousands have relative standard errors of more 20% which means that data with the values less than 7.5 ths. has certain **limitations of reliability** (significant sampling error) and must be used with care.

- The sampling method doesn't give full opportunity to provide adequate coverage for all the types of economic activity or occupation, since the sample is not stratified according to these variables.
- The indicators describing the population's economic activity status are based on a **respondents'** answers, personal (subjective) assessment of standardized questionnaire.

In some cases the answers have been obtained not directly from the target respondent because of the impossibility of his/her participation at the time of the survey (e.g. respondent isn't available). The responses provided proxy from the another adult member of the sampled household. As a result, in some cases collected information contain a response approximation.

LFS methodology and other key changes / revisions in brief

Subject of changes / revisions	Previous (until 2018)	New (since 2018)
Population coverage	De facto (present) population	Usual resident (De Jure) population
<i>of which:</i> Resident population absent from RA (≤ 3 and < 12 months))	Were not subject for survey	Are subject for survey
Employment coverage		
- Framework	Domestic employment	National employment
- Own-use production of goods / services	Counted in Employment	Do not counted in Employment
- Residency of producer units (location)	Data were not collected / no data disaggregation	Data collected / disaggregated
Survey sampling weights	Not adjusted (2011 Population Census based)	Adjusted (by Resident population projection (calibrated weights))
Age coverage of population	15-75 years old	15-75 years old
Age coverage of published indicators	15-75 years old	15-74 years old
Terminology	Economically active population	Labour force
	Economic activity rate	Labour force participation rate
	Inactive population	Population out of labour force
Indicators		
- Own-use production of goods	Data were collected without details	Data collected in details and published quarterly
- Own-use production of services	Data were not collected	
- Unpaid trainee work	Data were not collected	
- Volunteer work	Data were not collected	
- Indicators of Labour underutilization (LU1-LU4)	- LU1 time series are available from 2001 - LU2-LU4 data were collected but not calculated	
- Time-related underemployment	Was calculated annually	Calculated and published quarterly
- Long-term unemployment	Was calculated annually	Calculated and published quarterly